Ա. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԴՅՈՔ ՀԻՄՆԱՎՈՐ ԵՆ ՋՈՒԳԱՎԵՌՆԵՐԸ

Սույն թվի հունիսի 10-15-ը միջեկեղեցական եւ հովվապետական այցով Վրաստանում էր գտնվում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հրավերով Իլիա Բ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարքի ու վիրահայոց թեմական խորհրդի:

Այցելության շրջանակներում, ինչպես հայտնի է, Վրաստանի աշխարհիկ ու հոգեւոր բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկվեցին Հայ Առաքելական եւ Վրաց Ուղղափառ եկեղեցիներին երկուստեք հուզող հարցեր: Մասնավորապես, Վրաստանի Հանրապետության նախագահ Մ.Սաակաշվիլու եւ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի հետ հանդիպումների ժամանակ Հայոց Հայրապետը բարձրացրեց վիրահայոց թեմին իրավաբանական կարգավիճակ[1] տալու եւ հայկական եկեղեցիները նրան վերադարձնելու[2] խնդիրները:

Հայկական առաջարկություններին ի պատասխան վրացական կողմը հանդես եկավ հակընդդեմ պահանջներով, այն է՝ վիրահայոց թեմին առաջիկայում կշնորհվի իրավական կարգավիճակ՝ Հայաստանում վրաց եկեղեցական համայնքի գրանցվելուն զուգահեռաբար: Սա որպես առաջին պահանջ եւ երկրորդ՝ հայերին կվերադարձվեն Վրաստանի հայկական առաքելական տաճարները, նմանապես վրացիներին պետք է հանձնվեն Հայաստանի վրացական եկեղեցիները: Ընդ որում, եթե առաջինը նախատեսվում է լուծել մոտակա ժամանակներում, ապա երկրորդ խնդիրը պետք է քննարկվի հաջորդ փուլում, որը Վրաց Կաթողիկոսի առաջարկությամբ՝ նպատակահարմար է կատարել վիճարկելի հորջորջվող եկեղեցիների պատկանելության հարցը պատմաբանների համատեղ հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով:

Անդրադառնանք վրացական այդ երկու առաջարկություններին առանձին-առանձին: Նախ, չի կարելի միեւնույն հարթության վրա դնել Վրաստանի մի քանի հարյուր հազարանոց կազմակերպված հայ համայնքը եւ Հայաստանի՝ հիմնականում խառն ամուսնություններից զոյացած, մի քանի տասնյակի հասնող վրացիների չկազմակերպված խումբը: Եթե

1 Վրաստանում օրենքով սահմանված է, որ միմիայն վրացական եկեղեցին կարող է ունենալ իրավաբանական կարգավիճակ: Մինչդեռ Վրաստանում, բացի հայկականից գործում են այլ խոշոր կրոնական համայնքներ եւս՝ կաթոլիկ, հրեական, մուսուլմանական եւ այլն:

Հոդվածը նոր էինք պատրաստում, երբ իմացանք, որ Վրաստանի խորհրդարանը հուլիսի 1-ին ընդունել է օրինագիծ՝ հինգ խոշորագույն կրոնական համայնքներին (հայ առաքելական, կաթոլիկ, հրեական, մուսուլմանական, բապտիստական) գրանցելու համար, ինչը հանդիպել է Իլիա Բ-ի ընդդիմությանը: Չնայած դրան, հուլիսի 5-ին Վրաստանի խորհրդարանը երկրորդ եւ երրորդ ընթերցումներով ընդունեց քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելը: Այդ փոփոխությունները նախատեսում են իրավաբանական անձի կարգավիճակ շնորհել մի շարք կրոնական կազմակերպությունների, այդ թվում՝ Հայ Առաքելական Եկեղեցուն:

2 Թբիլիսիում ժամանակի ընթացքում կառուցված մի քանի հայկական եկեղեցիներ (Բեթղեհեմ, Ս. Սրբեհանոս, Ս. Գարապետ, Կուսանաց անապատ եւ այլն) վերջին տասնամյակներում վերականգնումից հետո օծվել են իբրեւ վրաց աղոթարաններ (տե՛ս **Պ. Մ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 69-85):

Հայաստանը պետական գրանցում տա «վրացական համայնք» հորջորջմանը, ապա դա, անշուշտ, պետք է կատարի օրենքի խախտումով: Բանն այն է, որ 1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ում 1997թ. սեպտեմբերի 10-ին կատարված փոփոխության համաձայն կրոնական համայնքը կամ կազմակերպությունը իրավաբանական անձ է ճանաչվում, եթե ընդգրկում է 18 տարեկանից բարձր առնվազն 200 հավատացյալ անդամ[3]: Դժվար թե Հայաստանում գտնվի օրենքով պահանջվող թվին համապատասխան վրացական կազմակերպված կրոնական համայնք: Հակառակ դեպքում, ՀՀ իրավասու մարմինները հարկադրված պետք է ելակետ ընդունեն այդ օրենքի հոդված 5-ի ուժը կորցրած 1991թ. խմբագրությունը, երբ գրանցման համար պահանջվում էր նվազագույնը 50 անդամ: Թեեւ այս թիվը նույնպես կասկածելի է:

Հաջորդ հարցը վերաբերում է վրացիների կողմից վիճարկվող եկեղեցիներին եւ նրանց առաջարկին՝ պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելուն: Որպես այդպիսիք՝ վրացական կողմն ակնարկում է Հայաստանի մի քանի եկեղեցիներ, որոնք հիմնականում սկզբից եւեթ եղել են հայադավան, ապա պատմական իրերի բերումով ժամանակավորապես դարձել քաղկեդոնական, այն էլ՝ հայ քաղկեդոնական, այլ ոչ՝ հունական կամ վրացական:

Հայ ազգային եկեղեցին (նրա հետ նաեւ Վրաց Եկեղեցին) Ե դարի կեսից սկսած հարկադրված է եղել պաշտպանողական ծանր ու անհաշտ պայքար մղել քաղկեդոնականության (երկաբնակության) դեմ: Պայքարը հատկապես թեժացել է Զ դ. վերջին Արեւելյան Հայաստանում, Ժ-ԺԱ դդ. մեր պատմական հայրենիքի արեւմտյան (բյուզանդահպատակ) մասում եւ ԺԳ դ. սկզբին Մեծ Հայքի հյուսիս-արեւելյան շրջաններում: Այդ երկարատեւ պայքարում Հայ Եկեղեցուն հաջողվեց անարատ պահել հայոց առաքելական ուղղադավանությունը եւ հավատարիմ մնալ եփեսոսյան դավանական բանաձեւմանը: Բայց, այնուհանդերձ, Հայաստանի մի շարք վայրերում քաղկեդոնականությունը (այն էլ հայ), վայելելով ժամանակի հզոր տիրակալների հովանավորությունը, ժամանակավոր առկայծումներ ունեցավ: Այսպես, Բյուզանդիայի Մավրիկոս (Մորիկ) կայսրը (582-602), Զ դ. վերջերին Պարսկաստանից գրավելով Արեւելյան Հայաստանի մեծ մասը, հայերին առաջարկում է քաղկեդոնականություն ընդունել, բայց հայրենասեր Կաթողիկոս Մովսես Բ Եղիվարդեցուց (574-604) մերժում ստանալով՝ ներկայիս Երեւանի հյուսիս-արեւելյան մասում (պատմական Կոտայք գավառի Ավան գյուղում) հիմնում է հակաթոռ կաթողիկոսություն՝ գլխավորու-

3 Ըստ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու 2009թ. մարտի 18-ի նախագծի, նախատեսվում է անդամների նվազագույն թիվը հասցնել 500-ի:

2011 թ. հուլիսի վերջին Հանրային խորհրդի կրոնական հարցերով հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց ՀՀ Արդարադատության նախարարության մշակած օրինագիծը՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխություններով: Ըստ այդ փաստաթղթի՝ որպես կրոնական կազմակերպության գրանցման շեմ սահմանվում է անդամների 25 թիվը: Դրա՝ ԱԺ -ում ընդունվելու դեպքում կդյուրացվի, անշուշտ, վրացական կրոնական համանքի գրանցումը: Բայց հղի է լուրջ վտանգներով, քանի որ նպաստավոր պայմաններ է ստեղծում աղանդավորական խայտաբղետ խմբերի առաջացման եւ բազմացման համար:

թյամբ հայ քաղկեդոնական Հովհաննես Բագարանցի Սյունական եպիսկոպոսի[4]: Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը կարճ կյանք է ունեցել՝ 591-602 թթ., քանի որ պարսից Խոսրով Բ Փարվեզ արքան (590-628) գրավել է Ավանը եւ վերացրել այդ կաթողիկոսությունը: Դրանից հետո այն դարձել է վանք, որտեղ 1219, 1285, 1287 թթ. մեկական արձանագրություններ են թողել Իվանե Զաքարյանը, վրաց Դավիթ թագաժառանգը եւ աթաբեկ ու ամիրսպասալար Խութլուբուղա Արծրունին[5]:

Վրացիների կողմից վիճարկվող եկեղեցիներից նախ եւ առաջ պետք է նկատի ունենալ **Հնեվանքը,** որը գտնվում է պատմական Տաշիրքում, այժմյան Լոռիի մարզի Ստեփանավանի ենթաշրջանում, Կուրթանի ձոր կոչվող վայրում, Թումանյան կայարանից մոտ 9 կմ հեռու:

Ըստ աղբյուրագետ-գիտնական Պ. Մուրադյանի ուսումնասիրության՝ Հնեվանքի հիմնադրումը կապված է Տաշիրքի մարզպան, Գագի իշխան Դիմիտրեի հետ, որը փորձելով խոչընդոտել Տաշիր-Զորագետի (Լոռի) Կյուրիկյան Դավիթ Անհողին Բագրատունի թագավորի հզորացմանը ու ծավալմանը (Տաշիր-Զորագետի թագավորությունը արեւմուտքից սահմանակից էր Շիրակին, հարավից՝ Նիգ գավառին եւ Ծաղկունյաց լեռներին, հյուսիսից՝ Վրաստանին, արեւելքից՝ Կայան գավառին եւ Կանգարքին՝ Գագ բերդով[6])՝ վրացիներին իրեն թիկունք դարձնելու նպատակով հրաժարվում է «հայրենի հայության» հավատից, ընդունում քաղկեդոնականություն եւ իր որդուն հոգեւորական է ձեռնադրում ու միաբանեցնում Հինէ վանքին[7]: Այդ որդին՝ Գեորգին, շուտով դառնում է Հնեվանքի արքեպիսկոպոս, իսկ մի քանի տարի անց՝ 1022 թ. եկեղեցի է կառուցում՝ վրացերեն շինարարական հիշատակագրությամբ[8]:

Հնեվանքը հունադավան կամ վրացադավան (=երկաբնակ) հայոց պատկանող վանք է եղել[9]: Շրջապատի բնակչությունը **Հնեվանք** անունն ստուգաբանում է իբրեւ հունաց վանք[10]: Բայց դա ժողովրդական ստուգաբանություն է:

Հաջորդ քաղկեդոնական վանքը Հայաստանում **Թեժառույքն** է (ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի ենթաշրջանի Մեղրաձոր գյուղի մոտ): Այն, համաձայն պահպանված վրացերեն արձանագրության, կառուցել է Իվանե Զաքարյանը, ԺԲ դարավերջին ու շնորհել իր նշանավոր զորական, իշխանաց իշխան Բուրային, որի տոհմական տապանատունն էլ հաստատվել է այդ մենաստանում[11]:

Իր ինքնատիպությամբ Հայաստանի միջնադարյան եզակի հուշարձաններից է **Կիրանց** վանքն այժմյան Տավուշի մարզում (պատմական Կայան գավառում): «Գլխավոր եկեղեցու եւ սեղանատան ներսույթները որմնանկարազարդ են, որոնց վրացատառ ու հու-

4 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երեւան, 1979, էջ 91, 112: Մանրամասները տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Երեւան, միջնադարյան հուշարձաններ, Երեւան, 1975, էջ 52-78:

5 **Կ. Ղաֆադարյան**, անդ, էջ 192-195:

6 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ, «Հայ ժողովրդի պատմություն», հատ.III. Երեւան, 1976, էջ 101-102: Նմմբ.՝ Ռ. Մաթեւոսյան, Տաշիր-Զորագետ, Երեւան, 1982, էջ 75:

7 Տե՛ս **Պ. Մուրադյան,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երեւան, 1977, էջ 188, 148-149:

8 Տե՛ս անդ, էջ 23:

9 Տե՛ս անդ, էջ 137:

10 Տե՛ս անդ, էջ 138:

11 Տե՛ս անդ, էջ 119-131:

նապառ մակագրությունները վկայում են վանքի պատկանելությունը հայ քաղկեդոնականներին»[12]:

Գլխավոր եկեղեցին (Կաթողիկե) կառուցված է թրծած աղյուսից: Կիրանց վանքի մյուս երկու եկեղեցիները գտնվում են Կաթողիկեին կից, նրա հարավային եւ հյուսիսային կողմերում: Դրանք կառուցված են գլխավոր եկեղեցու ձեւով՝ աղյուսից[13]: Ըստ որոշ հետազոտողների՝ աղյուսաշեն վանքերն ազդեցություն են կրել սելջուկյան մահմեդական ճարտարապետությունից (վերասլաց դամբարանաշինությունից)[14]: Կիրանց մենաստանը հիմնադրվել է ԺԳ դ. 30-40 ական թթ. իշխան Ավագ Զաքարյանի հրամանով[15]: Վրացական արձանագրությունների առկայությունը Ն. Մառը բացատրում է ոչ թե ազգային, այլ դավանական գործոնով, ինչպես վկայակոչում է Լ. Ներսեսյանը[16]:

Ահա այսօրվա Հայաստանի այն պատմական վանքերը, որոնք հիմնադրել են հայ քաղկեդոնականները: Այդպիսի փաստը նույնիսկ վրաց գիտնականներն են խոստովանում: Ակադ. Ե. Թաղայշվիլին, ինչպես Պ. Մուրադյանն է հայտնում, քննելով Չանգլիում (պատմ. Եղեւնամայր, Լենամոր, գտնվում է Կարսի եւ Վաղարշակերտի սահմանագլխին) վրացերեն արձանագրությունների առկայության հանգամանքը, եզրակացնում է, որ այնտեղ ուղղափառ (երկաբնակ) հայոց կամ քաղկեդոնական հայոց վանք է եղել, եւ դրանով է բացատրվում Հայաստանի այս կամ այն վանքերում, եկեղեցիներում վրացերեն վիմագրերի գոյությունը[17]: Խոսելով վերջիններիս մասին՝ Պ. Մուրադյանը նշում է, որ «12-րդ դարի վերջերից սկսած, կապված Զաքարյանների առաջխաղացման հետ, մեզանում վրացերեն արձանագրությունները հաճախադեպ են դառնում եւ առավել ստվարանում Իվանեի քաղկեդոնական դառնալուց հետո: Անիի, Կոշի, Թեժառույքի, Քոբայրի, Կողբի, Պղնձահանքի եւ այլ վայրերի արձանագրությունները (մի քանի տասնյակ) գրված են հենց 13-րդ դարում, հավասարապես բաշխվելով այդ դարի գրեթե բոլոր տասնամյակների միջեւ: 14-րդ դարում նրանց թիվը նորից նվազում է, իսկ Չանգլիի 1362 թվականի վիմագրով փաստորեն ավարտվում, եթե չհաշվենք 18-19-րդ դարերի որոշ տապանագրեր, այն էլ տոհմական տապանատներում, որ երկրի քաղաքական-մշակութային կացությանը գրեթե առնչություն չունեն»[18]:

Ինչ վերաբերում է վրացիների կողմից վիճարկման առարկա դարձած մյուս եկեղեցիներին, ապա դրանք, մինչեւ քաղկեդոնացվելը, բացառապես եղել են հայ առաքելական նվիրապետությանը պատկանող կրոնական հաստատություններ, որոնք Ժ-ԺԲ դդ. հիմնադրել, հովանավորել, օժանդակել են Լոռիի Կյուրիկյան թագավորները: Անգամ ***Նաղարծնի վանքը*** (եղել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զորափոր, հետագայում՝ Կայան գավառում), ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքից 18կմ հյուսիս, որի հիմնադրման ժամանակն անորոշ է, ԺԱ դ. կեսին գործել է Կյուրիկյանների հովանու ներքո: Այդ փաստի

12 «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 5, Երեւան, 1979, էջ 452:

13 «Սովետական Հայաստան պատմական հուշարձաններդը», պր. V, Իջեւանի շրջան (ուղեցույց), կազմեց **Ն. Եղիազարյան**, Երեւան, 1947, էջ 14-15:

14 Տե՛ս **Л. Нерсесян**, Монастырь Киранц-памятник культуры армян халкидонов, Памятник в контексте культуры, Москва, 1991, էջ 12:

15 Տե՛ս անդ, էջ 10:

16 Տե՛ս անդ, էջ 9:

17 Տե՛ս **Պ. Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 22-23:

18 Անդ, էջ 21:

վառ վկայությունը Հաղարծնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում Սմբատ թագավորի տապանաքարն է[19]: ԺԱ դ. կեսին սելջուկ-թուրքերի կողմից ավերվելուց հետո ԺԲ դ. վրաց Գեորգի Գ թագավորի (1155/6-1184-Ա.Մ.) եւ հայոց իշխանների հրամանով նորոգվել է, եւ վերականգնվել են վանքի հողատիրական իրավունքները: Հաղարծնի վանքը ծաղկում է ապրել ԺԲ դ. վերջին եւ հաջորդ դարի սկզբին հայտնի երաժշտագետ Խաչատուր վարդապետ Տարոնացու վանահայրության օրոք[20]:

Հայկական կոչվող խորշերով ճակատային մշակմամբ, գմբեթի ու Վեղարի որոշակի վերասլացությամբ (ինչը բնորոշ է նաեւ Այրիվանքի Կաթողիկե եւ Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցիներին) աչքի ընկնող Հաղարծնի գլխավոր տաճարի՝ Ս. Աստվածածնի ճարտարապետական հորինվածքի մեջ վրացական դրոշմ փնտրելը, մեղմ ասած, անիմաստ է:

Սելջուկների արշավանքի հետեւանքով Տաշիր- Զորագետի Կյուրիկյան թագավորության վերացումից՝ 1113 թ. շատ չանցած Հայաստանի հյուսիս-արեւելյան շրջանները հայտնվում են հզորացող Վրաստանի հսկողության ներքո, որն այդ տարածքները գրավել էր թուրքերից: Հայկական այդ շրջաններում ասպիճանաբար տարածվում է քաղկեդոնականությունը, որի ծավալմանը մեծապես օժանդակում է վրաց Դավիթ Շինարար թագավորը (1089-1125): Նա դեռեւս 1103 թ. վրաց եկեղեցական ժողովում հայադավանությունը որակում է իբրեւ հերձված[21]: Քաղկեդոնականությունը հյուսիս-արեւելյան Հայաստանի մի շարք օջախներում ԺԳ դարի սկզբին վերջնական հաղթանակ է տանում՝ կապված Իվանե (Հովհան) Զաքարյանի երկաբնակություն ընդունելու հետ:

Այդ օջախների ներքո բացառապես նկատի պետք է առնել **Պղնձահանքի** (Ախթալայի) եւ **Քոբայրի** վանքերը, որոնք մինչ այդ եղել են բացառապես հայադավան վանական հաստատություններ, ինչպես վկայում են մատենագրական եւ վիմագրական սկզբնաղբյուրները: Պղնձահանքը գտնվել է պատմական Գուգարք նահանգի Տաշիրք գավառի Ագարակ գյուղում, այժմյան ՀՀ Լոռիի մարզի Ախթալա ավանում: Շատ հին ժամանակներում հանդիսացել է հայոց Տաշրաց իշխանների ագարակը, իսկ վաղ միջնադարում դարձել է բնակավայր՝ պահպանելով իր հատուկ՝ Ագարակ անունը ուր տնօրինում էին Գուգարաց բդեշխները:

387 թ. Հայաստանի բաժանումից եւ 428 թ. հայկական պետականության վերացումից հետո պարսից արքունիքը հայոց միասնությունը ջլատելու ու հայերին թուլացնելու դիտավորությամբ Մեծ Հայքի Ուտիք, Արցախ նահանգները հանձնում է Աղվանից թագավորությանը, իսկ Գուգարքը՝ Վրաստանին: Այդ ժամանակ է որ վրաց թագավոր Վախտանգ Գորգասալը (446-499) Ագարակի եկեղեցին դարձրել է եպիսկոպոսարան[22]: Նախ, շատ ուշ շրջանի (ԺԸ դարի) մատենագրական հիշատակությանն այնքան էլ վստահել չի

19 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջեւանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան եւ Հռ. Ջանփոլադյան, Երեւան, 1977, էջ 59: Սմբատը հնարավոր է լինի կամ Դավիթ Անհողինի (996-1048) եղբայրը կամ որդին (տե՛ս Կյուրիկյանների տոհմածառն ըստ Ռ. Մաթեւոսյան, նշվ. աշխ., էջ 110-111):

20 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 524:

21 Տե՛ս անդ, էջ 989:

22 Տե՛ս **Ն. Եղիազարյան**, Ախթալայի վանքը եւ նրա հետ կապված Ախթալա ավանի մյուս հուշարձանները. «Էջմիածին», 1968, Է, էջ 13-14:

կարելի, չնայած ակնարկված է ոչ թե եկեղեցի հիմնելու, կառուցելու, այլ եղածին թեմական վիճակ շնորհելու մասին եւ երկրորդ, մինչեւ 608 թ. եղել է միայն հայկական նվիրապետություն, որի գերագույն, վեհափառ ղեկավարից է ձեռնադրություն սպացել Վրաց Կաթողիկոսը: Է դարի սկզբին վրաց Կյուրիոն Կաթողիկոսի՝ հայոց հաղորդությունից անջատվելն արդյունք էր Մավրիկիոս կայսեր ծավալապաշտական քաղաքականության:

Բագրատունյաց թագավորության շրջանում՝ 885-1045 թթ, եւ հետո էլ Պղնձահանքի (Ախթալայի) վանքը պատկանել է Կյուրիկյաններին[23]: Ապա այն անցել է Զաքարյան իշխաններին: «Վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Աստվածածինը կառուցել է Իվանե Զաքարյանը ԺԳ դարի առաջին քառորդում՝ գոյություն ունեցող հայադավան հաստատությունը վերածելով վրացականի»[24]: Այն, որ մինչեւ Ս. Աստվածածնի կառուցումը, Ախթալայի վանքն ունեցել է հայ միաբաններ եւ նախապես հայկական «հիմնարկութիւն» է եղել՝ հավաստում են նաեւ Ղ. Ոսկյանը[25] եւ ուրիշ ուսումնասիրողներ[26]:

Իվանեի՝ քաղկեդոնականություն ընդունելու մասին հետեւյալն են նշում վրացական աղբյուրները. «... եւ այս Զաքարիան եւ Հովհանը (Իվանեն) հավատարիմ էին թագավորներին (վրաց-Ա.Մ.) եւ փորձված արշավանքների մեջ, մարդիկ անվանի, թեեւ կրոնով հայեր (սոմեխներ) էին, իսկ Հովհանը (Իվանեն) հույժ տեղյակ էր գրականությանը, որի պատճառով էլ զգաց իր[ենց] կրոնի թյուրությունը, [վրացադավան] մկրտվեց[27] եւ դարձավ ճշմարիտ քրիստոնյա»[28]: «Քաղկեդոնական դավանանքին հարած հայ իշխանի պատվերով կառուցված լինելու հանգամանքն իր կնիքն է դրել եկեղեցու հորինվածքի՝ հատկապես հարդարանքի վրա, օժտելով այն վրացառճությամբ»[29]:

Հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է որ Իվանեն՝ Զաքարեի եղբայրը, վախճանվեց (1227 թ.-Ա.Մ.) «եւ թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ ի Հայոց՝ Վրացի վանս արար»[30], մեկ այլ տեղ պատմիչը կրկնում է նույնը. «Եւ զի յառաջ քան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իւանէ, տարան թաղեցին զնա ի Պղնձահանքն՝ զոր իւր շինեալ էր վասն Վրաց, առեալ ի Հայոց...»[31]: Իսկ Վարդան Արեւելցին հավելում է, որ «Ի վեցհարիւր ինանուն եւ ինն թուին (1250-Ս.Մ.) մեռաւ Աւագն՝ որդին Իւանէի եւ թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ հայր իւրում...»[32]:

---

23 Կյուրիկե Բ թագավորի դուստր Մարիամն այնտեղ 1118 թ. խաչքար է կանգնեցրել (տե՛ս **Պ.Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 202):

24 **Գ.Շախկյան**, Լոռի: Պատմության թարակերտ էջերը, Երեւան, 1986, էջ 130:

25 **Ղ.Ոսկեան**, Գուգարքի վանքերը, Վենետիկ, 1960, էջ 31-32:

26 Տե՛ս **Պ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 200-201:

27 Կրկնամկրտությունը պատմականորեն մերժվել է թե՛ հայոց, թե՛ ընդհանրական եկեղեցիների կողմից: Մկրտությունն անկրկնելի խորհուրդ է, որ մարդու կյանքում կատարվում է ընդամենը մեկ անգամ, հանուն Ս.Երրորդության (Մատթ. ԻԸ19):

28 **Լ. Մելիսսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Բ, Երեւան, 1936, էջ 11:

29 Տե՛ս **Գ.Շախկյան**, նշվ. աշխ., էջ 131:

30 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 222:

31 Անդ, էջ 238:

32 **Վարդան Արեւելցի**, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը եւ ապտանիշերով ծանոթությունները Գ. Բ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 150:

Այդպիսով, Պղնձահանքը դառնում է Գուգարքի (Տաշիր-Զորագետի) քաղկեդոնական վանքերի ու եկեղեցիների կենտրոնը, որտեղ հայ միաբաններն իրենց չէին օտարել հայկականությունից[33]:

Հյուսիսային Հայաստանի հաջորդ հայ քաղկեդոնական կենտրոնը եղել է **Քոբայրը**: Այն, որ վերջինս մինչև ԺԳ դ. կեսերը եղել է հայ առաքելադավան եկեղեցի, հավաստված է վիմական սկզբնաղբյուրներով, մասնավորապես Մածնաբերդի Կյուրիկե Բ թագավորի (1149-1170) դուստրերի՝ Մարիամի եւ Ռուսուդանի ջանքերով Քոբայրում 1171 թ. եկեղեցի կառուցելու մասին շինարարական արձանագրությամբ[34]: Իսկ այնտեղ, մինչ այդ կուսանաց մենաստան է եղել[35]:

Քոբայրի՝ Կյուրիկյան Բագրատունիներին պատկանելն են վկայում նաեւ վրաց աղբյուրները. «Կորիկեի (Կվերիկեի) եղբայր Սմբատը գալիս էր եւ հանձնում երեք բերդեր՝ Ոփրեթն, Քոբա[Յ]ն ու Վարզաքարը: Իսկ Բագրատ թագավորը (Բագրատ Դ՝ 1027-1072-Ա.Մ.) խղճաց նրանց եւ ազատեց ու վերադարձրեց նրանց բոլոր բերդերը, բացի Սամշվելիդեից եւ ոչ էլ այլ բերդերի տերերին. ամենամեծերին թույլ տվեց ներս մտնելու այնտեղ, այլ գրավեց Սամշվիլիդեն, [որը եւ միացրեց] իր թագավորությանը: Եւ այսպես հայերը (սոմեխները) վրաց հպատակ դարձան»[36]:

Կարծում ենք՝ այստեղ խոսքը Տաշիր- Զորագետի թագավոր Կյուրիկե Ա-ի (1050-1089) եղբոր՝ Սմբատի մասին է:

ԺԳ դ. կեսերին Քոբայրը Կյուրիկյաններից արդեն անցել էր Զաքարյաններին՝ հայադավան հաստատությունից վերածվելով քաղկեդոնականի: Դրանով է պայմանավորված հուշարձանների մի մասի վրա վրացերեն արձանագրությունների, վրացառճության եզրեր ունեցող հարդարանքի տարրերի առկայությունը[37]:

Ինչ վերաբերում է Քոբայրի վրացերեն վիմագրերին, ապա դրանք, թվով 16 միավոր,Զաքարյան շառավիղների շինարարական հուշարձաններ կամ գապանագրեր են[38]: Քոբայրում են թաղված Զաքարե ամիրսպասալարի որդի Շահանշահը, վերջինիս որդիներ Գիորգին, Միաբգրձելը, հոգեւոր եւ աշխարհիկ նշանավոր գործիչներ:[39]

Երբ 1261 թ. մոնղոլները ապստամբության կասկածանքով մահապատժի ենթարկեցին Զաքարե Դ Զաքարյանին, նրա հայրը Շահնշահը, լսելով որդու մահվան գույժը, գտնվելով «ի գիւղն Օձուն, ի նեղասրտութիւն անկեալ՝ ի տրտմութենէն մեռաւ եւ տարեալ թաղեցին զնա ի Քոբայր, զոր առ կինն նորա (Սադուն Արծրունի իշխանի դուստր Նազուրը - Ա.Մ.) ի Հայոց»[40]:

---

33 Տե՛ս **Պ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 203, 210:

34 Տե՛ս անդ, էջ 169: Հմմտ.՝ «Վիմական գարեգիր ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ.Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 30: (Այստեղ թվականը՝ ՈԻ-1171, սխալ է ներկայացված՝ ՈԲ-1153, ինչն ուղղել է Պ. Մուրադյանը):

35 Վարդան Արեւելցուց ու Մխիթար Այրիվանեցուց քաղված հիշատակությունները տե՛ս ըստ **Պ. Մուրադյանի**, նշվ. աշխ., էջ 163:

36 Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Ա, Երեւան, 1934, էջ 208:

37 Տե՛ս **Գ. Շահկյան**, նշվ. աշխ., էջ 42:

38 Տե՛ս **Պ. Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 19, 20:

39 Տե՛ս **Գ. Շահկյան**,անդ:

40 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 377:

ԺԷ դ. երկրորդ կեսին Քոբայրի եկեղեցին, ինչ-որ շրջանի լռությունից հետո, նորից վերակազմվել է, գործել, այն էլ որպես հայադավան հաստատություն[41]:

Հյուսիսարեւելյան Հայաստանի այն վանքերից, որոնք նախապես եղել են առաքելադավան, ապա Զաքարյանների իշխանապետության օրոք վերածվել քաղկեդոնականի՝ **Խուճապի** մենաստանն է Լալվար լեռան լանջին:

Ինչ վերաբերում է **Սանահնի** ու **Հաղպատի** վանքերին, ապա դույզն անգամ չի կարելի կասկածել այդ նշանավոր կրոնական, գիտակրթական, մշակութային օջախների հայադավան պատկանելության վրա:

Պատմական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այդ երկու մենաստանները հիմնարկել են Աշոտ Գ Ողորմած թագավորը (953-977) եւ Խոսրովանույշ թագուհին համապատասխանաբար 966 թ. եւ 977 թ.՝ իրենց որդիներ Գուրգենի (Կյուրիկեի) եւ Սմբատի արեւշատության համար:

ԺԲ դ. վերջերին եւ ԺԳ դ. սկզբներին այդ վանքերը մեծ հռչակ են ձեռք բերել իբրեւ հայ աստվածաբանական, դավանաբանական մտքի հզոր կենտրոններ, որոնք նշանավոր վարդապետների՝ Գրիգոր Տուտեորդու, Դավիթ Քոբայրեցու գլխավորությամբ կարողացել են երկու ճակատով պայքար մղել հայ առաքելական ուղղադավան վարդապետությունը եւ ավանդական ծիսակարգն անաղարտ պահելու այլադավան ուսմունքներից:

Հաղպատի, Սանահնի վանական համալիրներում վրացական անհշան մակագրությունների առկայությամբ չպետք է եզրակացնել, թե Հաղպատը երկար ժամանակ գտնվել է քաղկեդոնականների ձեռքում, ինչպես կարծել է Ն. Տոկարսին[42], այլ գոնե ենթադրել, որ այդ դավանանքի նկատմամբ որոշակի հանդուրժողականություն է ցուցաբերվել, ինչը պայմանավորված է եղել արեւելյան ավանդապաշտ վարդապետների վրա Զաքարե ամիրսպասալարի ճնշումներով՝ Հայ Եկեղեցու արարողակարգում որոշ փոփոխություններ մտցնելու միտումով[43]: «13-րդ դարի երկրորդ կեսին հայոց վարդապետների հյուսիսային դպրոցը այլեւս նախկին կազմն ու հեղինակությունը չուներ: 13-րդ դարի առաջին կեսից իրենց նշանակությամբ ավելի ազդեցիկ էին դարձել **Նոր Գետիկի** ու **Խորանաշատի** դպրոցները»[44]:

Այսպիսով, վերոշարադրյալից բխում է այն հետեւությունը, որ վրացական կողմի տեսանկյունով Հայաստանի խնդրահարույց համարվող մի քանի վանքերի ու եկեղեցիների ազգային պատկանելության նկատմամբ ոչ մի կասկած լինել չի կարող: Դրանք բացառապես հայկական են, մի մասը պատմական որոշակի փուլում՝ թեեւ քաղկեդոնական, բայց հայ երկաբնակ[45], որոնց ակնառու ներկայացուցիչները կերտել են ոչ միայն հայոց, այլեւ վրաց միջնադարյան պատմության փառավոր էջերը եւ նրանց թողած պատմամշակութային հուշարձանների միակ ժառանգորդը հայ ժողովուրդն է՝ ի դեմս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Նմանապես անընդունելի է զուգահեռների անցկացումը դրանց եւ Վրաստանում վրացացված հայկական եկեղեցիների միջեւ:

---

41 Տե՛ս **Պ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 166-167:

42 Տե՛ս **Н. М. Токарский**, Архитектура Армении IV-XIV вв.Ер., 1961, էջ 288-289:

43 Տե՛ս **Պ. Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 192-194:

44 Անդ, էջ 192:

45 Հայ քաղկեդոնականները՝ **ծայթերը**, այսօր չկան: Նրանց մի մասը ձուլվել է վրացիներին, մի հատվածն էլ դարձի եկել Հայոց Եկեղեցու գիրկը: